Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

9 771829 252000 19022

Տպագրվում է 1990 թվականից

22 (1421) • 14 հունիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ



# 02 Ճակատամարտ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Ոստիկանության պետը մասնակցեց օպերատիվ միջոցառմանը

«Հետախուզում-2019» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում տեղեկություններ էին ստացվել, որ ոստիկանության Մասիսի բաժնի կողմից սպանության մեղադրանքով հետախուզվող 60-ամյա տղամարդը թաքնվում է Կոտայքի մարզի Ալափարս գյուղում՝ հանգուցյալ հորեղբոր տանը: Նաեւ տեղեկություն կար, որ հետախուզվողը հնարավոր է զինված լինի ռռնակով եւ այլ զենքերով:



Հունիսի 7-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի գլխավորությամբ Ալափարս մեկնեցին ոստիկանության մի շարք ստորաբաժանումների ծառայողներ, այդ թվում՝ հատուկ նշանակության վարչության: Միջոցառումը տեւեց տասը ժամից ավելի: Քննարկվեցին հետախուզվողին անվնաս բռնելու եւ բերման ենթարկելու մի շարք տարբերակներ: Արդեն հունիսի լույս 8-ի գիշերը Վալերիյ Օսիպյանն անձամբ զրուցեց հետախուզվողի հետ: Տեւական եւ արդյունավետ բացատրական հեռախոսազրույցից հետո հետախուզվողը կամավոր դուրս եկավ թաքստոցից եւ տեղափոխվեց ոստիկանության Չարենցավանի բաժին: Նա կալանավորվել է:

էջ 2

## Օպերլիազորը վնասազերծեց սպանություն կատարողին



Հունիսի 11-ին «շտապօգնության» կայանից ոստիկանության Վաղարշապատի բաժնում ահազանգ ստացվեց, որ Արմավիրի մարզի Առատաշեն գյուղում մահացած անձինք կան:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ Առատաշենի բնակիչ, 63-ամյա տղամարդը որսորդական հրացանով կրակոցներ է արձակել 61-ամյա կնոջ եւ նրա 70-ամյա եղբոր ուղղությամբ, որոնք ստացած վնասվածքների հետեւանքով մահացել են: Նախնական վարկածով՝ կատարվածը կենցաղային բնույթի տարաձայնությունների հետեւանք է:

Սպանության մեջ մեղադրվող տղամարդուն վնասազերծեց ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզներից մեկը, որը Առատաշեն գյուղի բնակիչ է եւ գտնվում էր արձակուրդում: Դեպքի վայր հասած օպերատիվ խումբն էլ կասկածյալին բերման ենթարկեց:

Քրեական գործ է հարուցվել:

Կատարվում է նախաքննություն:

## Բացահայտվել են ապօրինություններ



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման, Շիրակի մարզային վարչությունների եւ Կումայրիի բաժնի ծառայողները բացահայտել են պետեկամուտների կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչությունվարչության ստուգումների բաժնի գլխավոր տեսուչի ապօրինությունները:

Ըստ նախնական տվյալների՝ գլխավոր տեսուչը 2013-2019 թթ. Գյումրիում գործող մի շարք տնտեսվարող սուբյեկտներից, որոնք գրանցված չեն եղել հարկային մարմիններում կամ պատշաճ չեն իրականացրել հարկային պարտավորությունները, անօրինական գործունեությունը չարձանագրելու համար որպես կաշառք պահանջել ու ստացել է խոշոր չափերով գումարներ:

Հարուցվել է քրեական գործ, որն ուղարկվել է քննչական կոմիտե՝ նախաքննության:

## Հատուցման ժամը



Ոստիկանությունն ունի մի շարք առանցքային գործառույթներ, որոնց հետեւողական ու լիարժեք իրացումն է առարկայական դարձնում պատժի անխուսափելիության գաղափարը: Հետախուզվողների հայտնաբերումն այդ գործառույթներից է: Յուրաքանչյուր հետախուզվողի հայտնաբերումով ոստիկանությունն, ըստ էության, փաստում է, որ չկան չբացահայտվող հանցագործություններ:

Հետախուզվողին հայտնաբերելու ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական աշխատանքները հանցագործությունը թարմ հետքերով բացահայտելուն ուղղված գործողություններից ոչ պակաս բարդ են, երբեմն նաեւ՝ վտանգավոր: Ավելին, որոնողական աշխատանքների ուղղությունները, բնույթը հնարավոր է պլանավորել, բայց կանխատեսել դրանց ծավալները՝ գրեթե անհնար է:

Ոստիկանները երբեմն տարիներով փնտրում են: Մի բան, սակայն, հստակ է, եւ ոստիկանության ընթացիկ վիճակագրությունը հենց դա է վկայում. եթե հանցանք ես գործել, խախտել ես օրենքը՝ անհնար է ընդմիշտ խուսափել պատասխանատվությունից:

էջ 7

## Հրազենով մտել էր բանկ

Հունիսի 10-ին, ժամը 17.30-ի սահմաններում, մի փղամարդ որսորդական հրացանով մփել էր Նոր Նորքի Թոթովենցի փողոցում գփնվող բանկերից մեկի մասնաճյուղ: Բանկում ծառայություն իրականացնող ոսփիկանության պեփական պահպանության գլխավոր վարչության աշխափակիցը, փեսնելով զինված փղամարդուն, անմիջապես բռնել էր հրազենի փողը եւ փորձել վնասազերծել: Ոսփիկանության ծառայողին հաջողվել էր բանկ մփած փղամարդուց խլել հրազենը, այնուհեփեւ քաղաքացիների օգնությամբ վնասազերծել նրան: Այդ ընթացքում նաեւ կրակոց էր հնչել:



Ահազանգով դեպքի վայր ժամանած ոսփիկանության Նոր Նորքի բաժնի օպերափիվ խումբն ու պեփական պահպանության գլխավոր վարչության ծառայողները փղամարդուն բերման ենթարկեցին ոսփիկանության Նոր Նորքի բաժին: Ոսփիկանությունում պարզվեց, որ նա Երեւանի բնակիչ է, 46 փարեկան:

Հանցագործության գործիք հրազենն առգրավվել է:

Քրեական գործ է հարուցվել:

Դեպքի հանգամանքները քննությամբ պարզվում են:

## Գույքի վնասում ռռնակով

Հունիսի 9-ին, ժամը 15-ի սահմաններում, ոստիկանության Արարատի բաժնում տեղեկություններ ստացվեցին, որ Վեդիի քաղաքապետարանի շենքում գտնվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման աշխատասենյակի ապակիները փշրված են:



Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ ժամը 2-ի սահմաններում ռռնակ են նետել աշխատասենյակ, որը պայթել եւ վնասել է տարածքը:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Արարատի բաժնի ծառայողները պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ եւ կասկածանքով բաժին բերման ենթարկեցին Վեդիում ապրող, 56-ամյա մի տղամարդու:

Նախնական տվյալներով՝ Վեդիի քաղաքապետարանը բնակության վայր չունեցող կասկածյալին սենյակ էր հատկացրել: Նա բացասական վարքագիծ էր դրսեւորել, հաճախ ալկոհոլ էր օգտագործել՝ խաթարելով քաղաքապետարանի բնականոն աշխատանքը, այդ իսկ պատճառով քաղաքապետարանի պարետը պահանջել էր, որ լքի տարածքը: Տղամարդը, այդ որոշումից սրտնեղած՝ ռռնակը նետել էր քաղաքացիական կացության ակտերի գրանցման սենյակ:

Քրեական գործ է հարուցվել:

Կատարվում է նախաքննություն::

## ՀՀ ոստիկանությունը հայտարարում է ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի բակալավրիատի եւ քոլեջի 2019/2020 ուստարվա պետպատվերի շրջանակներում ընդունելություն

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիան իրականացնում է «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ առկա ուսուցման ձեւով ուսուցում: Ուսման տեւողությունը 4 տարի է:

Կրթահամալիրի քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանության սպա» որակավորմամբ առկա ուսուցման ձեւով ուսուցում: Ուսման տեւողությունը 2 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

### Կողոպուտ՝ ավազակությունից առաջ



*Դանակի սպառնալիքով փող էր պահանջել, բայց գործն այլ ընթացք էր ստացել. հարձակումը ձախողվել էր:*

էջ 3

### Համացանցային հանցագործություններ



*Հարկ է իմանալ այն տհաճ անակնկալների մասին, որոնք կարող են սպառնալ վիրտուալ աշխարհում:*

էջ 6

### Հատուցման ժամը



*Քսան տարի ազատության մեջ էր, բայց քրեական պատասխանատվությունից խուսափել չհաջողվեց:*

էջ 7

# Ոստիկանության պետը մասնակցեց օպերատիվ միջոցառմանը

Սկիզբը՝ էջ 1



Մայիսի 30-ին ոստիկանության Մասիսի բաժին ահազանգ էր ստացվել: Արարատի մարզի Նորամարգ գյուղ մեկնած «շտապօգնության» խումբը հայտնեց, որ գյուղի տներից մեկում վնասվածքներ ստացած անձինք կան:

Ահազանգին արագ արձագանքած ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Մասիսի բաժնի օպերատիվ խմբերը տեղում պարզեցին, որ այդ անձինք վնասվածքները ստացել են պայթյունի հետեւանքով: Բեկորային բազմաթիվ վնասվածքներով տանտերը, նրա կինը, նրանց հարսն ու թոռը տեղափոխվեցին Երեւան՝ «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ 60-ամյա տանտերը մահացավ:

Ոստիկանության փորձաքրեագիտական վարչության պայթյունատեխնիկական, ձգաբանական ու սառը զենքի հետազոտությունների գծով մասնագետները պարզեցին, որ տուժողները վնասվածքները ստացել են նռնակների պայթյունի հետեւանքով:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ հիվանդանոց տեղափոխված կնոջ նախկին ամուսինը վիճել էր նրա ու նրա ներկայիս ամուսնու հետ: Այդ ընթացքում էլ երկու նռնակ էր նետել նրանց ուղղությամբ եւ հեռացել:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է նախաքննություն:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Բերման են ենթարկվել օրինախախտներ

**Հունիսի 6-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ու տարածքային ստորաբաժանումների, պարեկապահակետային ծառայության գնդի, «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի եւ ճանապարհային ոստիկանության ծառայողներն ուժեղացված ծառայություն իրականացրին մայրաքաղաքում: Նպատակը հասարակական կարգն ու երթեւեկության անվտանգությունը հանցավոր եւ հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելն էր: Ոստիկանության ծառայողներն օպերատիվ խմբերով շրջեցին ողջ Երեւանով եւ հայտնաբերեցին մի շարք իրավախախտումներ: Ցենքզինամթերք, սառը զենք պահելու եւ կրելու, ուրիշի գույքը դիտավորությամբ վնասելու կասկածանքով, փողոցներում թիկնազորով շրջելու, հասարակության մեջ ոչ սթափ վիճակում հայտնվելու եւ ոչ իրավաչափ վարք դրսեւորելու, ոստիկանության ծառայողների օրինական պահանջները չկատարելու համար ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ**



**բերման ենթարկվեցին մի խումբ անձինք:**

**Ոստիկանների ուշադրության կենտրոնում էին նաեւ իրենց գործողություններով երթեւեկության անվտանգությանը սպառնացող վարորդները, որոնք միտումնավոր թույլ էին տալիս երթեւեկության կանոնների խախտումներ, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորում երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ՝ վտանգելով նրանց կյանքն ու առողջությունը: Հայտնաբերվեց այդպիսի 49 վարորդ, որոնց մեքենաները տեղափոխվեցին ճանապարհային ոստիկանության պահպանվող հատուկ տարածք: Հայտնաբերվեցին նաեւ բազմաթիվ վարորդներ, որոնք մեքենաները վարում էին առանց համարանիշերի, փոխարինված կամ քողարկված համարանիշերով, առանց համապատասխան փաստաթղթերի: Ուժեղացված ծառայության ընթացքում հայտնաբերվեց նաեւ հետախուզման մեջ գտնվող հինգ մեքենա:**

**Ոստիկանությունը, հասարակական անվտանգությամբ մտահոգ, պարբերաբար իրականացնելու է նմանօրինակ կանխարգելիչ միջոցառումներ:**

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Պահպանելով անմեղության կանխավարկածը

Հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքն ամրագրված է բազմաթիվ միջազգային իրավական ակտերում, ՀՀ Սահմանադրությամբ, ներպետական մի շարք իրավական ակտերում:

ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Հետեւաբար, ընթացող քրեական դատավարության վերաբերյալ տեղեկությունները կամ կարծիքները պետք է լուսաբանվեն եւ տարածվեն մամուլի միջոցով՝ առանց խախտելու անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է հարգեն բոլորը, այդ թվում՝ լրագրողները: Այդ սկզբունքի գործնական կիրառումը պետք է արտահայտվի նաեւ ոստիկանության կողմից տրամադրվող տեղեկատվություններում:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը չի կարելի ընկալել ծայրահեղ ձեւով՝ անտեսելով անձի մյուս կարեւորագույն իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, խոսքը վերաբերում է արտակարգ բնույթի այն իրավիճակներին, երբ գոյություն ունի իրական սպառնալիք հանրության յուրաքանչյուր անդամի անվտանգության նկատմամբ, եւ նախազգուշացման նպատակով հայտարարվում են վտանգ ներկայացնող անձի տվյալները կամ ցուցադրվում նրա լուսանկարը: Այս դեպքում դա ոստիկանության՝ մարդու եւ հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված պարտականության կատարման համատեքստում է: Օրինակ՝ լրատվամիջոցներով տեղեկացվում է քրեակատարողական հիմնարկից փախուստի դիմած կամ հետախուզման մեջ գտնվող անձի մասին՝ հրապարակելով նրա լուսանկարը կամ հաղորդվում է նրա անձը նկարագրող այլ մանրամասներ, ինչը միանշանակ կարելի է գնահատել իրավաչափ:



Յուրաքանչյուր քրեական գործ ունի իր առանձնահատկությունները, որոնք հաշվի առնելով՝ վարույթ իրականացնող մարմինը պետք է կոնկրետ գործի կապակցությամբ որոշի տեղեկատվության տրամադրման այն սահմանները, որոնք չեն խոչընդոտի քննության ընթացքին, միաժամանակ կբավարարեն հանրության հետաքրքրությունն ու կապահովեն տեղեկատվություն ստանալու՝ նրա իրավունքի լիարժեք իրականացումը: Այդ կապակցությամբ, նախնական քննության տվյալների պաշտպանության նկատառումով, տեղեկատվության տրամադրման սահմանափակման իրավական հիմքի հստակ բովանդակությունը եւ այն բնորոշող սահմանների ընդգծումն այնքան էլ միանշանակ չէ: Այդուհանդերձ, գոյության ունեն որոշ ուղղորդող չափորոշիչներ կամ հանգամանքներ, որոնցով վարույթ իրականացնող մարմինը պետք է առաջնորդվի կամ հաշվի առնի քրեական գործի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակահարմարության հարցը լուծելիս: Մասնավորապես դրանք հետեւյալն են ՝ քննությանը միջամտելու կամ խոչընդոտելու կանխման անհրաժեշտությունը, ապացույցների պահպանման անհրաժեշտությունը, հանցագործությունից տուժած անձանց անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, քննություն իրականացնող մարմնի հետ համագործակցող անձանց ապահովման անհրաժեշտությունը, հանցագործին ձերբակալելու անհրաժեշտությունը, նախաքննության թափանցիկությունն ու հրապարակայնությունն առավելագույնս ապահովելու անհրաժեշտությունը:

Որպես ամփոփում՝ ընդգծենք՝ անմեղության կանխավարկածի ապահովումը արդարադատության կարեւոր սկզբունքներից է:

**Համիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Իրավախախտ վարորդը բերման ենթարկվեց



Հունիսի 7-ին ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի կարգախմբերից մեկը Կոմիտասի պողոտայում ծառայություն իրականացնելիս նկատել էր «Հունդաի Սոնատա» մակնիշի ավտոմեքենա, որի դիմապակին թաղանթապատ էր: Ճանապարհային ոստիկանները կանգնեցրել էին հիշյալ ավտոմեքենան եւ վարորդին առաջարկել տեղում վերացնել իրավախախտումը: Վարորդը հրաժարվել էր վերացնել իրավախախտումը, վիճել էր ոստիկանների հետ՝ քաշքշելով նրանց:

Ճանապարհային ոստիկանները վարորդին բերման ենթարկեցին ոստիկանության Արաբկիրի բաժին, իսկ մեքենան տեղափոխվեց բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Կատարվում է քննություն:

**Մ. Ս.**

# Ավազակային հարձակում դեղատանը



Մայիսի 31-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում տեղեկություն ստացվեց, որ Մամիկոնյանց փողոցի դեղատներից մեկում ավազակային հարձակում է եղել: Ոստիկանության օպերատիվ խումբը մեկնեց դեպքի վայր: Պարզվեց, որ դիմակավոր մի անձ մտել է դեղատուն եւ ատրճանակի նմանվող առարկայով սպառնալով՝ դրամարկղից հափշտակել է 170 հազար դրամ:

Ոստիկանների ձեռնարկած միջոցառումների արդյունքում ժամեր անց կասկածանքով ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկվեց Արմավիրի մարզի մի բնակիչ: Նա ներկայացվել է քննչական մարմին եւ կալանավորվել:

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Մեքենայի գողությունը բացահայտվեց



Դեպքն անցյալ տարի ամռանն է կատարվել՝ Լոռու մարզում: Օգոստոսի 15-ին ոստիկանության Գուգարքի բաժնում հաղորդում էր ստացվել, որ Վանաձոր-Ալավերդի ճանապարհին կայանված «ՎԱԶ-2109» մակնիշի մեքենան առեւանգել են:

Ոստիկանները տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին, սակայն ո՛չ մեքենան, ո՛չ հանցագործին հայտնաբերել չհաջողվեց: Որոնողական աշխատանքները շարունակվեցին, եւ ամիսներ անց գողությունը բացահայտվեց:

Քրեական հետախույզների եւ ճանապարհային ոստիկանության ծառայողների համատեղ միջոցառումների արդյունքում մեքենան հայտնաբերվեց Վանաձորի Մոսկովյան փողոցում: Պարզվեց, որ «ՎԱԶ-2109»-ը առեւանգել է Սպիտակի 39-ամյա մի բնակիչ: Բացատրական աշխատանքի շնորհիվ նա ներկայացավ ոստիկանության Գուգարքի բաժին եւ խոստովանեց կատարածը:

Հարուցվել է քրեական գործ:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Շտաբային վարժանք՝ առցանց տարբերակով

Ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում Եվրամիության եւ Եվրոպական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվեց «Հարավային եւ Արեւելյան Եվրոպայի տարածաշրջաններում փորձաքննությունների կարողությունների ամրապնդում հանցագործության վայրում՝ քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային պատահարների հետաքննության վերաբերյալ» ծրագրի շրջանակում շտաբային վարժանք՝ առցանց տարբերակով:



Մասնակցում էին ոստիկանության, արտակարգ իրավիճակների եւ առողջապահության նախարարությունների, պետական եկամուտների կոմիտեի, ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչները, առցանց՝ Վրաստանի Հանրապետության իրավասու ծառայողների հետ համատեղ:

Շտաբային վարժանքը քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային հանցագործությունների հետաքննության հետ կապված դեպքի վայրերում դժվար եւ առանձնահատուկ պայմաններում զննություն անցկացնելու թեմայով էր:

Հավաքի մասնակից երկու պետությունների ներկայացուցիչները, ըստ Եվրամիության կողմից նախապես հաստատված սցենարի, վարժանքն իրականացրին տեսականորեն, որի ընթացքում ընդգծվեց մասնակից բոլոր գերատեսչությունների համատեղ աշխատանքի արդյունավետությունը եւ փոխգործակցությունը:

Վարժանքի ավարտական փուլում առցանց տեսակապ հաստատվեց ծրագրի կոնսորցիումի կազմակերպիչների հետ:

Կատարված գործողությունների վերաբերյալ կազմակերպիչները մի շարք հարցադրումներ արեցին, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ, ինչպես եւ կատարվեցին համապատասխան դիտարկումներ:

Վարժանքի ընթացքում ձեռք բերված տեսական փորձը կնպաստի սեպտեմբերին Վրաստանի Հանրապետությունում հիշյալ ծրագրի շրջանակում նախատեսված դաշտային վարժանքի արդյունավետ գործողությունների իրականացմանը:

## ԽԱՉԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Խաչիկ Ավետիսյանը:

Ծնվել է 1937 թ., Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղում:

Բանակում ծառայելուց հետո սովորել է Մոսկվայի կոոպերացիայի ինստիտուտում: 1966 թվականին ընդունվել է ներքին գործերի համակարգ: Եղել է տեսուչ, ավագ տեսուչ, քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ, բաժանմունքի պետ:

1987-1990 թթ., մինչեւ թոշակի անցնելը, մայրաքաղաքի Շահումյանի շրջանի ՆԳ բաժնին կից պահպանության բաժնի պետն էր:

Խաչիկ Ավետիսյանը, որտեղ էլ ծառայել է, վայելել է ղեկավարության ու գործընկերների վստահությունը:

Լավ մարդու, բարեխիղճ սպայի, ընկերոջ հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

**Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ**

# Կողոպուտ՝ ավազակությունից առաջ

Մասիսում ավազակային հարձակում էր կատարվել: Մայիսի 31-ին մի տղամարդ Դպրոցականների փողոցի հագուստի խանութ էր մտել, հարցուփորձ արել կոշիկների արժեքի մասին, եւ երբ համոզվել էր, որ վաճառողուհին մենակ է, դանակի սպառնալիքով փող էր պահանջել: Բայց գործն այլ ընթացք էր ստացել. հարձակումը ձախողվել էր:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Մասիսի բաժնում տեղեկացան օպերատիվ կառավարման կենտրոնից: Հարկավոր էր րոպե առաջ դեպքի վայր հասնել. զարգացումներն անկանխատեսելի էին...

Իսկ զարգացումներ, այնուամենայնիվ, եղել էին: Քաղաքացիներն օգնության էին հասել, վնասազերծել հարձակում կատարած 41-ամյա տղամարդուն, որն էլ ընկել ու վնասել էր դեմքը:

Ոստիկանները նրան հիվանդանոց տեղափոխեցին: Բուժօգնություն ստանալուց հետո տղամարդը բերման ենթարկվեց ոստիկանության Մասիսի բաժին:

Ավազակության փաստով միջոցառումները շարունակվում էին, երբ նույն օրը ոստիկանության Մասիսի բաժնում տեղեկություններ ստացվեցին, որ Շիրազի փողոցում ժամեր առաջ մի կնոջ էին կողոպտել: Տուժողը բաժին հրավիրվեց:



Ըստ նրա՝ հանրախանութից գնումներ կատարած դուրս էր եկել, երբ մի տղամարդ թիկունքից մոտեցել էր, ձեռքից հափշտակել դրամապանակն ու փախել:

Կողոպուտ կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ իրավապահները տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին: Ուսումնասիրվեցին հանրախանութի տեսախցիկների տեսագրությունները, որոնց վերծանումը հուշում էր, որ կողոպտողին փնտրելու կարիք չկա: Նա արդեն ոստիկանությունում էր: Ավազակային հարձակման կասկածանքով բերման ենթարկված տղամարդը խոստովանեց, որ մինչ այդ մի կնոջ էր կողոպտել:

Ներկայացվող դեպքը բացահայտել են Նոր Նորքի ոստիկանները:

Հունիսի 5-ին Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգում մի տղամարդ ծեծել էր անցորդներից մեկին, պոկել պարանոցի ոսկյա շղթան, փորձել էր փախչել. տուժողը 1-02 էր զանգել, մեքենայով շրջայց կատարող պարեկներն էլ բռնել էին փախչողին:

Ոստիկանության Նոր Նորքի բաժնում պարզվեց, որ կասկածյալը Դավիթ Մալյան փողոցի բնակիչ է, 41 տարեկան: Մի անգամ ավազակության մեղադրանքով արդեն դատապարտվել էր: Բայց հետեւություններ չէր արել, եւ հանցավոր վարքը նրան կրկին ոստիկանություն բերեց:

Երկու դեպքով էլ հարուցվել է քրեական գործ:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Բացահայտում են ոստիկանները



*Հունիսի 2-ի վաղ առավոտյան ոստիկանության Շենգավիթի բաժին հաղորդում ստացվեց, որ Շիրակի փողոցի շենքերից մեկի բակում կայանված «Օպել» մակնիշի ավտոմեքենայի գազի բալոնը գիշերը գողացել են: Կոտրել էին մեքենայի կողային ապակին, բացել դուռը եւ բեռնախցիկից գողացել գազի բալոնը:*

*Ահազանգից երկու ժամ անց ստացվեց եւս մեկ հաղորդում՝ գողացել էին Շիրակի փողոցի շենքերից մեկի բակում կայանված «Օպել»-ի գազի բալոնը:*

*Ոստիկանության Շենգավիթի բաժնի եւ Չարբախի բաժանմունքի քրեական հետախույզները սկսեցին հանցագործության բացահայտման միջոցառումները: Ոստիկանության Չարբախի բաժանմունքի ծառայողները օպերատիվ տվյալներ ստացան հանցագործությունները կատարած անձի ինքնության վերաբերյալ: Նրան հայտնաբերելու միջոցառումներին միացան ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողները: Համատեղ աշխատանքի արդյունքում, գողությունները կատարելու կասկածանքով, ոստիկանության Չարբախի բաժանմունք բերման ենթարկվեց Երեւանի 34-ամյա մի բնակիչ:*

*Նախկինում խուլիգանության եւ գողության մեղադրանքներով դատապարտված տղամարդը խոստովանեց, որ գազի բալոն է գողացել նաեւ Շիրակի փողոցի շենքերից մեկի բակում կայանված «Ռենո» մակնիշի ավտոմեքենայից, որի տերը ոստիկանություն չէր դիմել:*

*Քննությունը շարունակվում է:*

# Կողոպուտը բացահայտվեց



Հունիսի 2-ին ոստիկանության Էրեբունու բաժնում մի կին հաղորդում տվեց, որ մայիսի 31-ին Նոր Արեշի 15-րդ փողոցում ինչ-որ մեկը թիկունքից մոտեցել էր իրեն, պարանոցից պոկել ոսկյա շղթան՝խաչով, ու փախել:

Քրեական հետախույզները կողոպուտը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու նպատակով, օպերատիվ հարցումներից զատ, ուսումնասիրեցին դեպքի վայրին հարակից շենքերի եւ օբյեկտների մոտ տեղադրված տեսախցիկների տեսագրությունները: Տեսահսկող սարքերը ֆիքսել էին փախչող տղամարդուն:

Որոնողական աշխատանքները շարունակվեցին: Քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ կողոպուտը հնարավոր է կատարած լինի Երեւանի Երկաթուղայինների փողոցի 38-ամյա մի բնակիչ: Նույն օրը նա, կողոպուտ կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Էրեբունու բաժին: Նա ոչ միայն խոստովանեց կատարածը, այլեւ քննչական փորձարարության ժամանակ ներկայացրեց արարքը:

Հարուցվել է քրեական գործ:

**Գ. Վ.**

# Ապօրինություն Կապանում



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում օպերատիվ տվյալներ են ստացվել Կապան քաղաքում կատարված ապօրինությունների վերաբերյալ: Գլխավոր վարչության ծառայողները Սյունիքի մարզային վարչության եւ Կապանի բաժնի գործընկերների հետ համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկեցին: Նախնական տվյալներով՝ 2006 թվականի հոկտեմբերին Կապան համայնքի ավագանին որոշում էր կայացրել անհատույց, նվիրատվության կարգով վարձակալներին օտարել համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները: Մեկ տարի անց Կապանի նախկին քաղաքապետը, հղում անելով ավագանու որոշմանը, իր հերթին որոշում էր կայացրել Սյունիքի նախկին մարզպետին նվիրատվության կարգով օտարել Կապանի Շահումյան 10/32 հասցեի բնակարանը, որն ընդգրկված չէր եղել համայնքի ավագանու 2006 թ. որոշման մեջ:

Առերեւույթ հանցագործության դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Անպատասխանատուն

Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի բնակիչ Գրիգոր Սաղաթելյանը աշխատանքի փնտրտուքի մեջ էր: Մի օր էլ պատահաբար հանդիպեց Ակունք գյուղի ծանոթին՝ Արմենին, եւ խնդրեց իր համար աշխատանք գտնել: Արմենը խոստացավ օգնել: Գրիգորը աշխատանքի անցավ նրա ընկերոջ՝ վարդենիսաբնակ Վարուժանի մոտ. զբաղվում էր գյուղատնտեսական աշխատանքներով: Տրակտորով պետք է վարուցանք աներ:



Այդ ընթացքում Գրիգորին փող պետք եղավ: Պարտք անելու բոլոր փորձերը մատնվեցին անհաջողության: Որոշեց դիմել գործատուի օգնությանը: Այսպես ասած՝ կանխավճար վերցրեց, բայց հետո զլացավ կատարել աշխատանքային պարտականությունները: Վարուժանը ամեն անգամ զանգում էր, «հրավիրում» աշխատանքի, բայց Գրիգորը տարբեր պատճառաբանություններով չէր ներկայանում: Վարուժանն էլ իր դժգոհությունները հայտնում էր Արմենին, որը միջնորդել էր Գրիգորին: Արմենը մնացել էր երկու «քարի արանքում»: Իսկ երբ պատահաբար հանդիպեց Գրիգորին, նախատեց անպատասխանատվության համար, նաեւ գործատուի եւ Գրիգորի հետ հանդիպում կազմակերպեց: Գրիգորը հունից դուրս եկած՝ ասաց, թե ինչու են իրեն անհանգստացնում աշխատանքի կանչելով: Նրա պահվածքի պատճառով՝ իրար քաշքշեցին, Վարուժանը եւս միացավ ծեծին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին, նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Գրիգորին պատճառվել էր թեթեւ վնաս:

Կատարվում է քննություն:

# Քարեւելու հետեւանքը



Գյումրեցի Վարդան Աբրահամյանը որոշեց երեկոն ընկերների հետ անցկացնել: Սրճարանում երաժշտությունը, միջավայրը, ոգելից առատությունը Վարդանի տրամադրությունը հավուր պատշաճի բարձրացրին:

Լավ ժամանակ անցկացնելուց հետո Վարդանը դուրս եկավ սրճարանից ու պատահաբար հանդիպեց թաղի բնակիչներ Սահակին եւ Անդրանիկին: Նրանք հարեւանությամբ գտնվող սրճարանից էին դուրս եկել եւ նույնպես գինովցած էին:

Վարդանը թաղեցիներին բարեւեց, սակայն նրանք դիտողություն արեցին բարեւի «որակի» վերաբերյալ:

Բարեւն Աստծունն է, բարի կամենալ է նշանակում, բայց այս դեպքում փորձանք դարձավ թաղեցիների գլխին: Իրար մեղադրեցին ու վիճեցին, որի ընթացքում Սահակը եւ Անդրանիկը խփեցին Վարդանին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Կումայրիի բաժնի աշխատակիցները:

Փաստով կատարվում է քննություն:

**Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# Մահվան հրեշտակներ
## կամ սերիական կին մարդասպաններ

Սկիզբը՝ նախորդ համարում

Բուժքույր Ջենեթ Ջոնսը աշխատանքի անցավ Տեխասի նահանգի հիվանդանոցում: Նրա առաջին հիվանդը տասնհինգ ամսական մանկիկ էր, որը շնչուղիների խնդիր ուներ: Մինչ մայրը զրուցում էր բժշկի հետ, բուժքույրը փոքրիկի հետ զննման սենյակում էր: Հանկարծ այնտեղից բղավեցին, թե երեխան խեղդվում է: Բուժքույրը կարողացել էր փրկել աղջնակի կյանքը: Ծնողները երջանիկ էին եւ ամենուրեք պատմում էին իրենց փոքրիկի կյանքը փրկած կնոջ մասին:

Մի քանի շաբաթ անց մայրը երեխայի հետ կրկին այցելեց հիվանդանոց: Բուժքրոջ ներարկումից անմիջապես հետո երեխան դադարեց շնչել: Հերոսական ջանքեր թափելու ներկայացումը նորից սկսվեց, բայց այս անգամ ավարտը ողբերգական էր:

«Քույր մահը» իր հանցավոր գործունեությունը շարունակում էր Տեխասի հիվանդանոցում: Վեց շաբաթվա ընթացքում հիվանդանոցում մահացավ վեց երեխա: Պետք էր տեսնել «հերոսացած» աշխատակցուհու ապրումները...

Բուժքրոջը մատնեց ուժեղ ազդեցությամբ դեղի տուփը: Ներարկվող դեղը թուլացնում էր մկանային համակարգը եւ սուր շնչառական խախտումներ առաջացնում: «Քույր-մահը» խոստովանեց իր հրեշավոր արարքները:

Կին սերիական մարդասպանները հիմնականում բուժհամակարգի աշխատակցուհիներ են, իսկ մարդասպանների մյուս տեսակը մայրեր են, որոնք սպանում են իրենց երեխաներին: Պատճառները տարբեր են: Օրինակ՝ սերիական մարդասպան Մարիբեթ Թինինգը իր երեխաներին սպանում էր սառնասրտորեն եւ հաշվարկով:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Թինինգների երրորդ երեխան մահացավ հիվանդանոցում՝ մինինգիտից:



Մարիբեթ Թինինգ

Բնական է, որ դժբախտությունից իրեն կորցրած մորը պետք է շրջապատեին հարազատներն ու բարեկամները, նա պետք է լիներ ուշադրության կենտրոնում, ինչը երկար չէր կարող շարունակվել: Ժամանակի ընթացքում նրա նկատմամբ ուշադրությունը թուլացավ: Փոքրիկի մահից մեկ ամիս անց՝ նոր ողբերգություն: Մահացավ մյուս երեխան՝ երկու տարեկան Ջոն, իսկ որոշ ժամանակ անց՝ չորսամյա Բարբարան:

Անզավակ մնացած ամուսինները որոշեցին, որ նորից պետք է երեխա ունենան: Շուտով ծնվեց նրանց փոքրիկը, բայց մեկ ամիս անց դժբախտությունը կրկնվեց: Բոլորի ուշադրության կենտրոնում հայտնված սգավոր մայրը սկսեց խոսել ինչ-որ գենետիկ հիվանդությունների մասին, որոնք իբր փոխանցվում են երեխաներին: Բայց նրանց ութերորդ երեխայի մահից հետո ամեն ինչ գլխիվայր շրջվեց: Սկսեցին կասկածել, որ ինչ-որ բան այն չէ: Նախկին գործընկերուհին մի հավաքույթի ժամանակ հայտնեց, որ Թինինգը նորից հղի է եւ պատրաստվում է սպանել այս փոքրիկին եւս: Կնոջ խորթ քույրը դիմեց ոստիկանություն...

Իսկապես, ծնվելուց որոշ ժամանակ անց փոքրիկը մահացավ: Հետաքննություն անցկացվեց: Պարզվեց՝ փոքրիկին խեղդամահ են արել...

Այս կանայք տառապում են Մյունհաուզենի վստահության սինդրոմով, երբ մարդը հանուն այն բանի, որ գտնվի ուշադրության կենտրոնում, հիվանդություն է կեղծակերպում կամ ինքն իրեն վնասում:

Թե՛ կին, թե՛ տղամարդ սերիական մարդասպաններն իրարից տարբերվում են: Ոլորտի մասնագետները այն կարծիքին են, որ հաճախ ծերանոցներում, հիվանդանոցներում գրանցված մահերի ժամանակ հանգամանքների մեջ առանձնապես խորամուխ չեն լինում: Կատարվում է մակերեսային քննություն: Կին սերիական մարդասպանների դեպքում հազվադեպ են սարսափելի դաժանությամբ սպանված զոհերը, ինչը չես ասի տղամարդ սերիականների դեպքում: Կին սերիական մարդասպանների մասին 1995 թվականին ԱՄՆ Հետաքննության դաշնային բյուրոն հատուկ գրքույկ հրապարակեց: Գրքում հետաքրքիր տեղեկություններ կան. ըստ ամերիկացի մասնագետների՝ ամենադժվար բացահայտվող հանցագործությունները կին սերիական մարդասպանների հեղինակած սպանություններն են: Նրանք անգամ հանցագործությունն իրականացնելիս հավատարիմ են մնում իրենց բնույթին եւ ամեն ինչ մանրակրկիտ ծրագրում են:

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

# Ձվարճալի ամփոփագիր

### Անզգույշ դանիացին

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ դեմքի ջերմային այրվածքով բուժօգնություն է ստացել Դանիայի Թագավորության 24-ամյա մի քաղաքացի:



Մեկնած ոստիկաններին նա հայտնել է, որ այրվածքը ստացել է քայլարշավի ժամանակ արեւահարվելու հետեւանքով:

### Անզգույշ բուլղարացին

Մայիսի 13-ին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «ստորին ծնոտի հոդախախտ» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Բուլղարիայի Հանրապետության 55-ամյա մի քաղաքացի: Նա հայտնել է, որ հազ ուտելիս վնասել է ծնոտը:

### Անզգույշ իտալուհին

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ գոտկային ողի կոտրվածքով բուժօգնության է տեղափոխվել 72-ամյա մի իտալուհի:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ նա վնասվածքը ստացել է հանգստյան տանը ճոճանակ նստելիս ընկնելու հետեւանքով:

### Հոր զայրույթը

Ոստիկանություն է զանգել 22-ամյա մի աղջիկ եւ հայտնել, որ իրենց տան մոտ ծեծել են իրեն եւ իր նախկին ընկերոջը:

Մեկնած ոստիկաններին աղջիկը հայտնել է, որ վիճաբանության ժամանակ հայրն է բռունցքներով հարվածներ հասցրել ընկերոջը, ապա ոտքով խփել է իրեն:

Մնում է հասկանալ՝ ընկերը մինչեւ ծե՞ծն է դարձել նախկին, թե՞ դրանից առաջ:

### Առատաձեռն վաճառողը

Ոստիկանություն է զանգել 56-ամյա մի քաղաքացի եւ հայտնել, որ իր տանը խնձոր վաճառելուց իրեն տվել են կեղծ երկու հազար ռուբլի: Նա նկարագրել է կեղծ փող տվողների մեքենան ու արտաքինը, նաեւ հավելել, որ դա արդեն երկրորդ դեպքն է:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ «երկրորդ անգամ փոցխին կանգնողը» վաճառել է ոչ թե խնձոր, այլ տնական օղի: Իսկ ռուսական ռուբլու տեսքով հուշադրամը վերցնելուց եւ օղին տալուց բացի, նաեւ վերադարձրել է 11.500 դրամ մանրոնը:

### Գյուղեցին... ձեռքով

Ոստիկանություն է զանգել անհայտ քաղաքացի եւ հայտնել, թե 10-րդ շենքի մոտ իրար են «գյուղլում»: Պարզվել է, որ ահազանգողը փոքր-ինչ չափազանցել է:

Շտապ մեկնած ոստիկաններին հաղորդում է տվել 54-ամյա մի տղամարդ: Ըստ նրա՝ շենքի դիմաց, ընտանեկան հարցերի շուրջ իր հարսի եղբոր հետ վիճաբանության ժամանակ, նրա ընկերներից մեկը, որին չի ճանաչում, ձեռքով խփել է գլխին՝ պատճառելով վնասվածք:

Տղամարդը հավատացրել է, որ իրեն խփողին կճանաչի:

Ձեռնարկվում են միջոցներ հարսի եղբոր ընկերոջ ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ:

### Տարօրինակ տանդեմ

36-ամյա մի կին հաղորդում է տվել, որ հայրը եւ նախկին ամուսինը դիտավորությամբ կոտրել են սեփականության իրավունքով իրեն պատկանող տան պատուհանի ապակիները, զոդման եղանակով փակել բակի դարպասն ու ներկով գրառումներ արել, իր հասցեին էլ հնչեցրել են սպանության եւ գույքը ոչնչացնելու սպառնալիքներ:

Հարցն այն է, թե ինչն է այդպես մտերմացրել կնոջ հորն ու նախկին ամուսնուն:

## www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունիսի 6-ից 13-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 30 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության, 1-ը՝ ծեծի եւ կողոպուտի, 1-ը՝ մարդուն առեւանգելու, 1-ը՝ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության կամ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, 3-ը՝ գողության, 5-ը՝ խարդախության, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու, 1-ը՝ ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 1 հետախուզվող:

Արձանագրվել է 109 ճանապարհատրանսպորտային պատահար. 11 մարդ զոհվել է, 166-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 30 դեպք. 4 մարդ զոհվել է, 26-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

## Հանրապետության ճանապարհին

Հունիսի 9-ին Երեւանի Կոմիտասի պողոտայի եւ Վրացական փողոցի խաչմերուկում իրար են բախվել «Ջակ» եւ «Սուզուկի» մակնիշի ավտոմեքենաներ. «Սուզուկի»-ի 47-ամյա վարորդը եւ «Ջակ»-ի 3-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում իրար են բախվել «Տոյոտա Կորոլա» եւ «ՎԱԶ-2109» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2109»-ի 55-ամյա վարորդը տեղում մահացել է, իսկ 52-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Երեւանի Հալաբյան եւ Արզումանյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Օպել» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի 29-ամյա ուղեւորը, «Օպել»-ի 37-ամյա վարորդը եւ 44-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Երեւանի Ն. Սաֆարյան փողոցում «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան բախվել է գերեզմանատան ցանկապատին եւ գերեզմաններին. 18-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Արաքս-Սարդարապատ ճանապարհի 1-ին կմ-ին «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 9-ամյա տղայի եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Ստեփանավան քաղաքի Գ. Նժդեհի փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 5-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Երեւանի Սարալանջի փողոցում իրար են բախվել «Նիսան», «Բիդ» եւ «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենաներ. «Լեքսուս»-ի 40-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Երեւանի Բագրատունյաց փողոցում իրար են բախվել «ԳԱԶ-24» եւ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆորդ»-ի 52-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Երեւանի Զիվանու եւ Րաֆֆու փողոցների խաչմերուկում «Կիա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 72-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Երեւանի Միկոյան փողոցում «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 84-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 10-ին Երեւանի Մոլդովական փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 51-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 11-ին Մյասնիկյան-Դալարիկ ճանապարհի 1-ին կմ-ին իրար են բախվել «Օպել» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2107»-ի 39-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 11-ին Արմավիրի մարզի Գեղակերտ գյուղում իրար են բախվել «ՎԱԶ-2106» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆոլքսվագեն»-ի 44-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 11-ին Վանաձորի Նարեկացու փողոցում իրար են բախվել «ԳԱԶ-5204» եւ «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել Աստրա»-ի 28-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

## Քաղաքական սպանությունների պատմությունից

Պետական ու քաղաքական գործչի անվտանգությունը միայն նրա թիկնապահների ու անվտանգության ծառայության աշխատակիցների պրոֆեսիոնալիզմից չի կախված: Պետական այրերը պետք է ամրապնդեն քաղաքացիական հասարակությունն ու ապակենտրոնացնեն իշխանությունը: Այդ դեպքում մահափորձի հավանականությունը զգալիորեն նվազում է:

Քաղաքական սպանությունն աշխարհի չափ հին է: Մարդասպանի զոհ են դարձել Հին Հունաստանի բազմաթիվ թագավորներ (ամենահայտնին, թերեւս, Ֆիլիպ Մակեդոնացու՝ Ալեքսանդր Մեծի հոր սպանությունն է) եւ Հռոմեական կայսրության տիրակալներ: Միջնադարյան Եվրոպայում քաղաքական սպանությունների առավել ցայտուն օրինակներ են Ֆրանսիայի երկու թագավորների՝ Հենրիխ 3-րդի (1589 թ.) եւ Հենրիխ 4-րդի (1610 թ.) սպանությունները:

Ռուսաստանում 200 տարվա ընթացքում սպանվել է երեք կայսր՝ Պյոտր 3-րդը, Պավել 1-ինը եւ Ալեքսանդր 2-րդը:

Պատմաբան Մայլզ Հադսոնը նշում է, որ թիկնապահների մեծ թիվը ոչ միայն չի բարձրացնում, այլեւ որոշ դեպքերում նվազեցնում է պետական կամ քաղաքական գործչի անվտանգության աստիճանը: Թիկնապահներն ու պահապանները կարող են պաշտպանել արտաքին վտանգներից, սակայն հայտնի են դեպքեր, երբ հենց իրենք են ոտնձգել պաշտպանյալի դեմ:

Պատմության մեջ ամենահայտնի թիկնապահներից էին Հին Հռոմի պրետորիանական գվարդիայի մարտիկները: Հռոմի առաջին կայսր Օկտավիանոս Օգոստոսի օրոք նրա անձնական թիկնազորում շուրջ երեք հազար մարդ կար: Հետագայում այդ թիվն աճեց: Այդ էլիտար ստորաբաժանման գոյության ընթացքում պրետորիանականները սպանեցին վեց կայսեր ու մասնակցեցին բազում դավադրությունների:



Բացի այդ, նրանց զոհն էին դառնում այն հռոմեացիները (սենատորներ, կոնսուլներ, զորավարներ), որոնց թշնամի էին համարում:

Համանման է նաեւ թուրք ենիչերիների պատմությունը: Սա հետեւակի էլիտար ստորաբաժանում էր, որը կոչված էր պահպանելու սուլթանների կյանքը: Ենիչերիների կորպուսը ստեղծվեց 14-րդ դարում ու գոյատեւեց 400 տարի: 18-րդ դարի կեսին այն իր կազմում 118 հազար զինվոր ուներ: Ենիչերիները 1622 թվականին սպանեցին Օսման 2-րդ սուլթանին ու տեւական ժամանակ Օսմանյան կայսրության ուժեղագույն ներքին գործոններից էին:

«Պրետորիանական երեւույթը» ի հայտ է գալիս նաեւ հաջորդ դարերում: Այսպես, 1984 թվականին Հնդկաստանի վարչապետ Ինդիրա Գանդին սպանվեց իր թիկնապահների կողմից: 2001 թվականին Կոնգոյի նախագահ Լորան Կաբիլան թիկնապահների ձեռքով սպանվեց Քինշասայի նախագահական պալատում:

Տիրակալի սպանության թեման երբեք չի կորցրել իր հրատապությունը: Ուիլյամ Շեքսպիրն, օրինակ, քաղաքական սպանությունների սյուժեներով է կառուցել իր երկու հայտնի ողբերգությունները՝ «Համլետն» ու «Մակբեթը», իսկ Ֆրիդրիխ Շիլլերը՝ «Վիլհելմ Թելը»:

Ամերիկացի քրեագետներ Նիլ Ալփերն ու Դերիլ Հելմանը «Հանցագործության տնտեսությունը. տեսություն եւ փորձ» գրքում փորձում են հիմնավորել մի տեսություն, որը 1960-ականների վերջին առաջ է քաշել ամերիկացի տնտեսագետ Հենրի Բեքերը: Համաձայն այդ տեսության՝ ցանկացած հանցագործություն (այդ թվում՝ քաղաքական) հիմնված է տնտեսական հաշվարկի վրա, այսինքն՝ քաղաքական սպանության դեպքում փոխգործակցում են պահանջարկը (այն մարդկանց կամ կազմակերպությունների առկայությունը, որոնց շահավետ է սպանությունը) եւ առաջարկը (այն ազդեցությունը, որ հավանական զոհն ունի այդ մարդկանց կամ կազմակերպությունների վրա): Հեղինակները նշում են, որ այդ սխեման միշտ չի աշխատում (հանցագործները երբեմն տարերայնորեն են գործում), սակայն մեծամասամբ ընկած է քաղաքական մահափորձերի հիմքում: Գիտնականների հաշվարկներով՝ այս սխեման առավել հաճախ գործում է տոտալիտար ռեժիմով պետություններում: Այսպես, օրինակ, 1921-1945 թթ. Հիտլերի դեմ իրականացվել է քառասուն մահափորձ, եւ դրանց մեծ մասը բաժին է ընկնում նրա կառավարման տարիներին:

***Շարունակելի***

## Քննչական գործողություններ

Կասկածյալի հարցաքննությունը համարվում է նուրբ գործ, ոչ բոլորին հասանելի: Քննչական մարմինների փորձառու աշխատակիցներից մեկի վկայությամբ՝ «Քննիչը այն հարցերը պետք է տա, որոնց պատասխանն արդեն գիտի: Հարցաքննությանը սովորաբար նախորդում է վկաների հայտնաբերման եւ հանցանշանների հավաքման քրտնաջան աշխատանք: Սակայն որպեսզի նույնիսկ տաղանդավոր քննիչը իր գործի իրական մասնագետ դառնա՝ կպահանջվի առնվազն տասը տարի»:



Տասնամյակների ընթացքում մշակվել է մասնագիտական խորամանկությունների մի ամբողջ հավաքածու: Մոսկվայի քրեական հետախուզությունում կիրառում էին այսպես կոչված՝ «ձերբակալություն-հարցաքննություն» մեթոդը. կասկածյալին տասնհինգ օրով ձերբակալում էին ինչ-որ մանր իրավախախտման համար, որի ընթացքում սկսում էին «աշխատել» այն հանցանքի համար, որի մեջ կասկածում էին: Այդ մեթոդով հնարավոր եղավ 1973 թ. բացահայտել ոսկերչական իրերի հավաքածու ունեցող Տատյան Տրոիցկայայի աղմկահարույց սպանությունը:

Ավազակները խեղդամահ էին արել Տրոիցկայային, նրա մորը եւ ընկերուհուն եւ բնակարանից դուրս էին բերել միլիոնավոր ռուբլի արժողությամբ թանկարժեք զարդեր: Հանցագործության բացահայտումը խիստ դժվար էր. չկային թանկարժեք իրերի հստակ քանակը եւ նկարագրությունը, իսկ վկաների հարցաքննությունը ոչինչ չտվեց: Դեպքից երկու տարի անց իրավապահները տեղեկացան, որ գողացված մատանիներից մեկը հայտնվել էր Լեոնիկ մականունով «օրենքով գողի» մոտ, սակայն հնարավոր չէր նրան ձերբակալել, քանի որ հանցագործը կարող էր տարբեր պատմություններ հնարել հանցանշանի մասին, ուստի քրեական հետախուզության աշխատակիցները դիմում են խորամանկության: Հարբեցողի դեր ստանձնած օպերատիվ աշխատակիցը մոտենում է Լեոնիկին եւ առաջարկում իր հետ խմել: Հասկանալի էր, որ իրեն հարգող «օրենքով գողը» պետք է մերժեր, սակայն «հարբեցողը» նրան վիրավորում է գողական աշխարհում անվայելուչ «կոզյոլ» վիրավորական խոսքով: Լեոնիկը ստիպված էր պատասխանել: Կռվում են, եւ «պատահաբար» հայտնված միլիցիոներների պարեկային խումբը ձերբակալում է երկուսին էլ: Լեոնիկին խուլիգանության համար դատապարտում են տասնհինգ օրվա բանտարկության: Նշված ժամանակը բավական էր, որպեսզի պարզեին, որ Լեոնիկը կապ չունի սպանության հետ, սակայն օգնեց դուրս գալու իրական հանցագործների հետքի վրա:

Հանցագործին «խոսեցնելու» ձեւերից մեկը բանտային խցում կատարվող օպերատիվ գործունեությունն է, երբ ենթադրյալ հանցագործի հետ նույն խցում հայտնվում է քրեական հետախուզության գործակալը: Հաճախ հանցագործները իրենց հետ նույն խցում գտնվողներին հայտնում էին այս կամ այն հանցագործության մանրամասները: Անկեղծության համար կային տարբեր պատճառներ՝ ոմանք պարծենում էին իրենց կատարած հանցագործություններով, ոմանք էլ բանտախցի ընկերոջը վստահում էին իրեն գաղտնիքները: Երբեմն կալանվածները խորհուրդ էին հարցնում բանտախցում գտնվող եւ «քրեական» անցյալ ունեցողներից: Նման դեպքերում գործակալը կամ նրա դերը կատարող օպերատիվ աշխատակիցը խորհուրդ էր տալիս լռել եւ որեւէ տեղեկություն չհայտնել կատարած հանցագործության մասին: Սակայն եթե պատժաժամկետը ավարտվելուց հետո կրկին ձերբակալում են, ապա նշանակում է, որ հետաքննչական մարմինները ծանրակշիռ փաստեր են հավաքել, ուստի անհրաժեշտ է համագործակցել իրավապահների հետ եւ հայտնել հանցագործության մանրամասներ, ինչը հաշվի կառնի դատարանը: Նման «խորհրդատվություն» ստացած հանցագործը ազատ արձակվելուց որոշ ժամանակ անց կրկին ձերբակալվում էր ու սկսում էր համագործակցել իրավապահների հետ: Նման մեթոդն արդյունավետ էր եւ հնարավորություն էր տալիս բացահայտել հանցագործություններ:

Նման մեթոդը, սակայն, միշտ չէ, որ կարող է հաջողություն ունենալ: Հարցաքննությունը վարող աշխատակիցը առաջին հերթին պետք է հանդես գա որպես լավ հոգեբան, կարողանա ընտրել հանցագործության բացահայտման ձեւը: Մի շարք դեպքերում բանտախցում կատարվող «մշակումները» արդյունք չէին ունենում, քանի որ քրեական զգալի փորձ ունեցողն իր հերթին լավ հոգեբան էր եւ կարողանում էր բացահայտել օպերատիվ աշխատակիցների լարած թակարդը:

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

# Համացանցային հանցագործություններ



Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաները, որ գիտության ու տեխնիկայի զարգացածության վկայությունն են, նաեւ «ներմուծեցին» նոր հանցատեսակ՝ կիբերհանցագործություն:

Հիմնախնդիրն առկա է նաեւ մեր երկրում: Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի կողմից, մասնավորապես, 2018 թ. ընթացքում հարուցվել է 70 քրեական գործ, որոնցից 16-ը՝ քրեական օրենսգրքի 181 հոդվածի մեղադրանքով՝ հափշտակություն համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, 22-ը՝ քրեական օրենսգրքի 254 հոդվածի մեղադրանքով՝ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը, 5-ը՝ քրեական օրենսգրքի 263 հոդվածի մեղադրանքով՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելը, 4-ը՝ քրեական օրենսգրքի 178 հոդվածի՝ խարդախության մեղադրանքով, 3-ը՝ քրեական օրենսգրքի 137 հոդվածի՝ սպանության սպառնալիքի մեղադրանքով եւ այլն: Եվս ինը գործ հարուցվել է քրեական օրենսգրքի 182, 189, 294 եւ 322 հոդվածների մեղադրանքով:

Ըստ վիճակագրության՝ 2018 թ. աճ է գրանցվել քրեական օրենսգրքի 181՝ հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, եւ 254՝ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը, հոդվածների մասով: Այս հանցատեսակները կատարվում են հիմնականում սոցիալական ցանցերի կամ էլեկտրոնային փոստերի օգնությամբ: Բացահայտումը կապված է հիմնականում հանցագործության՝ արտերկրում ավարտվելու եւ հետքերը մի քանի երկրների սերվերային համակարգերում թաքցնելու հետ: Գումարած՝ տարբեր երկրներում գործող եւ միմյանց հետ օրենսդրական հակասություններ առաջացնող իրավական ակտերը, ինչի արդյունքում պահանջված տվյալը հիմնականում չի հասնում պահանջող իրավապահ մարմնին:

Մեզ «հասանելի» հանցատեսակ է համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալ՝ համապատասխան սարքավորումների միջոցով տեղեկատվություն որսալը, տարբեր կրիչներից տեղեկատվությունն ապօրինի պատճենահանելը:

Տարածված հանցատեսակ է նաեւ համակարգչային վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելը եւ տարածելը:

Վիրտուալ աշխարհում կատարվող հանցատեսակներից է նաեւ շորթումը: Սոցիալական ցանցերում երրորդ անձի անունով ստեղծվում են վարկաբեկիչ անկետաներ, որտեղ նշվում են այդ անձի անհատական տվյալները, հեռախոսահամարը եւ այլն, այնուհետեւ գումար են պահանջում դրանք վերացնելու համար:

Ներկայացվող դեպքը համացանցային խարդախություն է:

Մայիսի 12-ին ոստիկանության Արմավիրի բաժնում Արաքս գյուղի մի բնակչուհուց հաղորդում էր ստացվել, որ ապրիլի 20-ին Ֆեյսբուք սոցիալական կայքի մի էջում տեսել է 75 հազար դրամ արժողությամբ սեղանի եւ վեց աթոռի հայտարարություն, հեռախոսով խոսել է վաճառողի հետ, որը ներկայացել է Մարիամ անունով: Նրա հետ պայմանավորվել եւ վճարային տերմինալի միջոցով փոխանցել է գումարը: Ըստ պայմանավորվածության՝ ապրիլի 22-ին գնված ապրանքը պետք է առաքեին իր տուն, սակայն իր հեռախոսազանգերին եւ ֆեյսբուքյան էջով ուղարկված նամակներին Մարիամը չի պատասխանում:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ Արմավիրի բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է Մարիամի ինքնությունը: Երեւան քաղաքի Լյուքսեմբուրգի փողոցից նա բերման է ենթարկվել ոստիկանության Արմավիրի բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաներն այսօր մուտք են գործել տնտեսության գրեթե բոլոր բնագավառները, սոցիալական ցանցերից օգտվում են միլիոնավոր մարդիկ, ավտոմատացվում են արտադրական գործընթացներ, կառավարման համակարգեր: Սա մարդկության մեծագույն նվաճումներից է: Բայցեւայնպես, հարկ է իմանալ նաեւ հնարավոր տհաճ անակնկալների մասին, որոնք կարող են սպառնալ վիրտուալ աշխարհում: Մարդկության նվաճումը մարդու դեմ կիրառողները, սակայն, պետք է գիտակցեն, որ իրենց ապօրինի գործողությունները բացահայտելը եթե ոչ դյուրին, ապա անհնար չէ:

Կատարվում է քննություն:

# «Դուռը բաց, ջուր տուր խմեմ»



Գեղարքունիքի մարզի 42-ամյա բնակիչ Միսակ Ս.-ն նախկինում վեց անգամ դատապարտվել էր: Վերջին պատժից ազատվել ու հայրենի գյուղ էր վերադարձել 2018 թ. մարտի 30-ին: Իսկ հինգ ամիս անց նորից կալանքի տակ էր առնվել:

2018 թ. սեպտեմբերի լույս 10-ի գիշերը Միսակ Ս.-ն համագյուղացի Սիրուշ Տ.-ի կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու դիտավորությամբ, գլխին հագցնելով երեխայի զուգագուլպայի գոտկային մասը, իսկ ձեռքերին՝ զուգագուլպայի ոտնաթաթերը, մոտեցել էր Սիրուշի տան մուտքի դռանը, թակել էր ու, ներկայանալով որպես նրա ծանոթ Դավո, ջուր էր խնդրել: Սիրուշը դուռը չէր բացել՝ ասելով, թե Դավո անունով ծանոթ չունի: Միսակը քարով ջարդել էր պատուհանի ապակին, ապա հրելով բացել էր մուտքի դուռը:

Այդ ընթացքում Սիրուշը հասցրել էր զանգել ոստիկանություն եւ հայտնել, որ իր տան վրա հարձակվել են: Նա փախել էր հյուրասենյակ: Միսակը գնացել էր նրա հետեւից, գցել էր հատակին ու դանակով բռնություն գործադրելու սպառնալիքով ցանկացել էր սեքսուալ բռնի գործողություններ կատարել:

Սիրուշին հաջողվել էր Միսակի ձեռքից խլել դանակը, նրան հրել ու գցել հատակին: Այնուհետեւ քաշել-հանել էր իր վրա հարձակվածի դեմքն ու ձեռքերը քողարկող դիմակ-զուգագուլպան ու ճանաչել համագյուղացուն:

Միսակը, հասկանալով, որ չի կարողանում կոտրել կնոջ դիմադրությունը, դիմել էր փախուստի՝ վերցնելով նաեւ Սիրուշի բջջային հեռախոսը, որ ոչ մի տեղ չզանգի: Բայց Սիրուշն արդեն ահազանգել էր, անմիջապես ժամանել էին ոստիկանները, ու կարճ ժամանակ անց Միսակը բռնվել էր:

Միսակ Ս.-ին մեղադրանք էր առաջադրվել:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում Միսակ Ս.-ն իրեն մեղավոր է ճանաչել ու հայտնել է, թե մինչեւ դեպքը շփում չի ունեցել տուժող կնոջ հետ: Դեպքի գիշերը ցանկացել է սեքսուալ գործողություն կատարել ու, իմանալով, որ համագյուղացի Սիրուշը մենակ է ապրում, նրա կողմից չճանաչվելու համար գլխին հագցրել է մանկական զուգագուլպայի գոտկային մասը, ձեռքերին՝ զուգագուլպայի ոտնաթաթերը, թակել է նրա դուռը, իսկ երբ նա դուռը չէր բացել, քարով կոտրել էր պատուհանի ապակին, մտել էր տուն: Սիրուշը գոռացել ու վազել էր հյուրասենյակ: Նրան գցել էր հատակին, ասել էր, որ իրեն փող կամ թանկարժեք իրեր պետք չեն, եկել է մի փոքր գործողություն կատարի ու գնա: Սիրուշը չէր համաձայնել իր առաջարկին: Ինքը փորձել էր ստիպել նրան, քաշքշել էին իրար: Սիրուշն իրեն հրել, գցել էր հատակին, իր գրպանից ընկել էր դանակը: Սիրուշը վերցրել ու սպառնացել էր իր իսկ դանակով: Երբ փորձել էր խլել դանակը, երկուսն էլ վնասվածքներ էին ստացել: Տեսնելով, որ չի կարողանում Սիրուշի դիմադրությունը կոտրել, հատակից վերցրել էր նրա հեռախոսն ու փախել: Ճանապարհին հեռախոսը գցել էր առվի մեջ:

Դատարանն արձանագրել է հանցագործությունների կատարման վտանգավոր ռեցիդիվ Միսակ Ս.-ի կողմից: Նա մեղավոր է ճանաչվել մեղսագրված արարքների համար՝ քրեական օրենսգրքի 34-139 հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 147 հոդվածի 1-ին մասով եւ դատապարտվել 7 տարի 6 ամիս ազատազրկման:

Գոհար ՔԱԼԱՇՅԱՆ

# Ապահով եւ անվտանգ հանգիստ

Դժվար գտնվի մեկը, որը չի երազում ճանապարհորդելու մասին: Լինել տարբեր երկրների պատմական վայրերում, ծանոթանալ այլ ժողովուրդների ազգային սովորույթներին, մշակութային արժեքներին: Ի վերջո, լիարժեք հանգստանալ, լիցքաթափվել կամ պարզապես անմոռանալի հանգիստ անցկացնել: Սակայն այլ երկրներում իրենց հանգիստն անցկացնել պատրաստվողներին կարող են տհաճ անակնկալներ սպասել, եթե նախօրոք հաշվի չառնեն մի շարք հանգամանքներ: Սա հատկապես վերաբերում է այն ռոմանտիկներին, որոնք նախընտրում են միայնակ ճամփորդել:

Միայնակ ճամփորդողները սովորաբար համարձակ եւ ինքնավստահ մարդիկ են, ու մի քանի կարեւոր խորհուրդ՝ նրանց:

Արդեն որոշումը կայացրել եք, ընտրել եք տուրիստական ընկերությունը, հյուրանոցը, երկիրը, բայց խորհուրդ ենք տալիս չշտապել, քանի որ կան այնպիսի չնախատեսված իրավիճակներ, իրադարձություններ, որոնք կարող են ոչ միայն փչացնել հանգիստը, այլեւ տհաճ հուշեր թողնել ողջ կյանքի ընթացքում:

Այդպիսի ֆորսմաժորային իրավիճակներից խուսափելու համար, մինչ մեկնելը անհրաժեշտ է յուրացնել մի քանի անհրաժեշտ, բայց հասարակ կանոն:

Ճանապարհորդության մեկնելիս լավ կլինի վերցնել միայն անհրաժեշտ իրեր ու պարագաներ: Պետք է հաշվի առնել տվյալ երկրի առանձնահատկությունները: Օրինակ, մահմեդական երկրներում ոգելից խմիչք ձեռք բերելը լուրջ խնդիր է, իսկ



Եվրոպայի մի շարք երկրների դեղատներում առանց դեղատոմսի չեն վաճառում անգամ ամենասովորական հաբեր:

Մեկնելիս աշխատեք փոքր ճամպրուկ ընտրել, որ ստիպված չլինեք մեծը միայնակ քարշ տալ մի վայրից մյուսը: Եթե չեք ցանկանում մնալ առանց իրերի կամ օդանավակայանում ունենալ անախորժություններ, ապա ոչ մի դեպքում մի խնդրեք անծանոթին հետեւելու ձեր ճամպրուկներին:

Հիշեք՝ օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից:

Գնում եք օտար երկիր՝ հարգեք այդ երկրի օրենքներն ու ավանդույթները եւ երբեք մի մոռացեք, որ ընդամենը հյուր եք տվյալ երկրում:

Ճանապարհորդության ընթացքում մի զլացեք կապ պահպանել ընտանիքի անդամների հետ: Նախօրոք պայմանավորվեք, թե ինչ հաճախականությամբ եք զանգելու նրանց: Հերթական հեռախոսազանգի ուշացումը նրանց համար ազդանշան կլինի, որ ինչ-որ բան այն չէ:

Գտնվելով օտար երկրում՝ ոմանք մոռանում են զգուշավորության մասին: Եթե չեք ցանկանում թիրախ դառնալ հանցագործների համար, մոռացեք գիշերային զբոսանքների մասին, այն էլ՝ ոչ մարդաշատ վայրում: Իսկ որոշ թաղամասերում նույնիսկ ցերեկային ժամերին հայտնվելն արդեն իսկ վտանգավոր է:

Մի՛ վստահեք անծանոթներին: Շատ հնարավոր է, որ ներկայանալի, հմայիչ արտաքինով անծանոթը սովորական խաբեբա լինի:

Պատկերացնո՞ւմ եք, ինչ վիճակում կհայտնվեք, եթե հմայիչ շիկահերի կամ գեղեցիկ երիտասարդի հետ անցկացրած անկրկնելի երեկոյից հետո հայտնաբերեք, որ մնացել եք առանց դրամի եւ փաստաթղթերի: Եղեք զգոն եւ ուշադիր, եւ հանգիստը անմոռաց հուշեր կթողնի ձեր կյանքում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Հատուցման ժամը

Սկիզբը՝ էջ 1

Վանաձորցի Հարություն Վանյանը 2017 թվականի հուլիսից հետախուզվում էր խարդախության համար: Հայտնաբերվեց Բագրատաշենի սահմանային վերահսկողության անցակետում: Անառարկելի փաստերի ճնշման տակ խոստովանեց կատարած եւս մի խարդախություն. համաքաղաքացի անհատ ձեռներեցից խաբեությամբ 400 հազար դրամ էր հափշտակել:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն բերման ենթարկված Մեխակ Ղազարյանը, հանդիսանալով սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրեն, խուսափել էր պետության նկատմամբ ունեցած հարկային պարտավորություններից, վճարունակ լինելով հանդերձ՝ չէր կատարել չորս միլիոն դրամի հարկային պարտավորությունը:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել էր, որ նա նաեւ մեկ այլ ՍՊ ընկերության հիմնադիրն ու տնօրենն է: Նույն կերպ էր վարվել իր այս ընկերության պարագայում եւս: Այս անգամ հարկային պարտավորություններից խուսափել էր մոտ 6 միլիոն 800 հազար դրամի չափով:

Ընդհանուր իրավասության դատարանը Մեխակ Ղազարյանին սնանկ էր ճանաչել, բայց նա շարունակել էր շինարարական աշխատանքներ իրականացնել, իսկ հարկային մարմիններին իրեն ձեռնտու հաշվարկներ եւ տվյալներ էր ներկայացրել:

Նրա նկատմամբ հետախուզում էր հայտարարվել 2014 թվականի մարտից: Հայտնաբերվեց չորսուկես տարի անց՝ ՌԴ իրավապահների հետ համագործակցության արդյունքում:

2017 թ. ապրիլի 22-ին ոստիկանության Կապանի բաժնում հաղորդում էր ստացվել: Գողություն էր կատարվել: Թիրախը քաղաքի մթերային խանութներից մեկն էր: Ջարդել էին մուտքի դռան կողպեքն ու գողացել ավելի քան մեկ միլիոն դրամի մթերք, տնտեսական ապրանքներ եւ փող:

Ոստիկանները միջոցառումներ ձեռնարկեցին կատարվածը թարմ հետքերով բացահայտելու ուղղությամբ: Իրականացվեցին անհետաձգելի օպերատիվ-հետախուզական եւ քննչական համալիր գործողություններ: Իրավապահներին հաջողվեց պարզել գողությունը կատարած անձանց ինքնությունը: Ոստիկանների օպերատիվ տեսադաշտում հայտնվեցին Արարատ քաղաքի բնակիչ Սեւակ Նուրիջանյանն ու Արտաշատ քաղաքի բնակիչ Ռուդիկ Բաղդասարյանը:

Ապրիլի 30-ին Սեւակ Նուրիջանյանը հայտնաբերվեց: Ռուդիկ Բաղդասարյանի նկատմամբ հայտարարվեց հետախուզում: Նա հայտնաբերվեց երկու տարի անց եւ Վրաստանի Հանրապետությունից տեղափոխվեց Հայաստան:



Արդյունավետ ավարտ ունեցավ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի աշխատակիցների ձեռնարկած համատեղ միջոցառումը:

Հունաստանից Երեւան ժամանող 45-ամյա Արա Հակոբյանը միջպետական հետախուզման մեջ էր դեռեւս 1998 թվականից: 1999-ին նա Ուկրաինայում հիմնում է ՍՊ ընկերություն եւ վարկ ստանալու համար դիմում Ուկրաինայի առեւտրային համագործակցության բանկին: Բանկը չի մերժում: Արա Հակոբյանը խնայբանկից ստանում է երկու միլիարդ կարբովանեց: Փողը, սակայն, տնօրինում է իր հայեցողությամբ՝ հոգալով սեփական կարիքները: Մեկ տարի անց Ուկրաինայի իրավապահ մարմինների կողմից քրեական գործ է հարուցվում, ու քանի որ Արա Հակոբյանը թաքնվում էր նախաքննությունն իրականացնող մարմնից, նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվում:

Քսան տարի ազատության մեջ էր, բայց, միեւնույն է, հատուցման ժամ կա, որովհետեւ ոստիկանության սկզբունքն է՝ բացահայտել հանցագործությունը՝ անկախ վաղեմությունից, անկախ աշխարհագրությունից:

Ոստիկանության ՔՀԳՎ աշխատակիցների իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մայիսի 7-ին հայտնաբերվեց եւս մի փախստական, որին Ռուսաստանի Դաշնության իրավապահները հետախուզում էին պաշտոնատար անձին կաշառք տալու կապակցությամբ: 2011-ի փետրվարին ՀՀ քաղաքացի Արմեն Հովհաննիսյանը Դոնի Ռոստով քաղաքի օդանավակայանում փորձել էր առանց համապատասխան մաքսազերծման ապրանք ներմուծել: Օդանավակայանի «կանաչ գոտու» տարածքում մաքսային ծառայության աշխատակցին առաջարկել էր կաշառք: Իրենից անկախ պատճառներով՝ գործարքն ավարտին հասցնել չէր կարողացել ու նույն պահին էլ հայտնվելով տեղի ոստիկանության տեսադաշտում՝ բերման էր ենթարկվել: Մինչեւ նախաքննության ավարտը նրա նկատմամբ խափանման միջոց էր ընտրվել ստորագրությունը՝ ՌԴ տարածքից չհեռանալու պարտավորությամբ: Բայց Արմեն Հովհաննիսյանը վերադարձել էր Հայաստան, իսկ երկու տարի անց մեկնել էր Հունաստան:

Ոստիկանության Բաղրամյանի բաժնի քրեական հետախույզները, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, մայիսի 23-ին «Զվարթնոց» օդանավակայանում հայտնաբերեցին Մինվոդի-Երեւան չվերթի ինքնաթիռով Հայաստան ժամանած 46-ամյա Արմեն Բարսեղյանին, որը 1999 թվականից հետախուզվում էր ոստիկանության Բաղրամյանի բաժնի կողմից:

Մայիսի 22-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզները, ոստիկանության ՔՀԳՎ, Արմավիրի մարզային վարչության եւ Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողների հետ համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մայրաքաղաքի Զաքարիա Քանաքեռցու փողոցի բնակարաններից մեկից ոստիկանության Վաղարշապատի բաժին բերման ենթարկեցին 52-ամյա Գրիգոր Ավետիսյանին, որը 2018 թվականի հունիսից հետախուզվում էր սպանության մեղադրանքով:

Եվ այսպես, ամեն հետախուզվողի հայտնաբերումով կրկին հաստատվում է անառարկելի ճշմարտությունը, որի հետ պետք է հաշվի նստեն բոլորը. օրենք ոտնձգողը դատապարտված է պատասխանատվության:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Գողությունները բացահայտվեցին

Մայիսի 22-ին ոստիկանություն զանգած Երեւանի ուսումնական կենտրոններից մեկի տնօրենը հայտնում էր, որ աշխատասենյակում իր պայուսակից գողություն են արել:



Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները կարճ ժամանակում հանցագործությունը բացահայտեցին:

Ոստիկանները կասկածներ ունեին, որ գողությունը հնարավոր է կատարած լինի 65-ամյա մի կին: Բացատրական աշխատանքի արդյունքում նա մայիսի 23-ին ներկայացավ ոստիկանություն եւ խոստովանական ցուցմունք տվեց: Բացի այդ, խոստովանեց եւս երկու հանցադրվագների մասին: Նույն եղանակով երկու անգամ մի կազմակերպությունից հափշտակել էր փող:

Ոստիկանության Արարատի բաժնի քրեական հետախույզները տեղեկություններ էին ստացել, որ Վեդիի մի բնակիչ գողություն է արել:

Տեղեկության հավաստիությունը ճշտելուց հետո իրավապահները պարզեցին կասկածյալի ինքնությունը: Մայիսի 23-ին, գողություն կատարելու կասկածանքով, կասկածվողը հրավիրվեց ոստիկանություն: Նա խոստովանական բացատրություն տվեց, որ 2017 թվականի փետրվարին Վեդիի խանութներից մեկից գողացել էր խմիչք ու փող:

Նախապատրաստվում են նյութեր:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

# Հանրախանութի «այցելուն»

Մայիսի 24-ին ոստիկանության Սեւանի բաժնում հաղորդում էր ստացվել, որ գիշերն անհայտ անձինք տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են Նաիրյան փողոցի հանրախանութի դուռը, դրամարկղից հափշտակել փող, վաճառասրահից՝ ապրանքներ:



Օպերատիվ խումբն անմիջապես մեկնեց դեպքի վայր, իրավապահներն ուսումնասիրեցին խանութի տարածքը: Տեսահսկող սարքերը ֆիքսել էին գողությունը կատարող երիտասարդներին: Բայց նրանց արտաքին տվյալների մասին պատկերացում կազմելը դժվար էր: Երկուսն էլ դիմակով էին: Գողությունը կատարած անձանց եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ իրավապահները որոնողական աշխատանքներ ձեռնարկեցին:

Հունիսի 4-ին ոստիկանության Սեւանի բաժնի ծառայողները, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, Երեւան-Սեւան-Դիլիջան ավտոճանապարհից, իրենց մեքենայով հանդերձ, բաժին բերման ենթարկեցին 17 եւ 18 տարեկան երկու երիտասարդի, որոնք Երեւանից էին՝ Ավանի բնակիչներ:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

# Հայտնաբերվել են հետախուզվողներ




Հունիսի 10-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի համայնքային ոստիկանների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Երեւանի Ազատության պողոտայի եւ Մամիկոնյանց փողոցի խաչմերուկից բերման է ենթարկվել Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի Ռամնիկ Ս.-ն, որը հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 118 (ծեծը) եւ 176 (կողոպուտը) հոդվածների մեղադրանքով:

◆

Հունիսի 8-ին ոստիկանության Բաղրամյանի բաժնի քրեական հետախույզները Բագրատաշենի սահմանային անցակետից ոստիկանության Բաղրամյանի բաժին բերման են ենթարկել 37-ամյա Հովհաննես Հ.-ին, որը 2018 թ. դեկտեմբերից հետախուզվում էր ոստիկանության Արմավիրի բաժնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 131 հոդվածի (մարդուն առեւանգելը) մեղադրանքով:

◆

Հունիսի 8-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ծառայողների հետ համատեղ Երեւանի Թաիրովի փողոցից ոստիկանության Կենտրոնական բաժին բերման են ենթարկել 29-ամյա Արմեն Դ.-ին, որը 2018 թ. ապրիլից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Հունիսի 7-ին ոստիկանության Ապարանի բաժնի քրեական հետախույզները անձնագրային բաժանմունքի ծառայողների հետ համատեղ միջոցառումներով հայտնաբերել եւ Ապարանի բաժին են ներկայացրել Երեւանի բնակիչ Ռուդիկ Ս.-ին, որը 2018 թվականի փետրվարից ՌԴ ՆԳՆ Կրասնոդար քաղաքի իրավապահների կողմից հետախուզվում էր գողության մեղադրանքով:

◆

Հունիսի 7-ին ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողները Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից բերման են ենթարկել ՌԴ քաղաքացի Արսեն Զ.-ին, որը ոստիկանության Արագածի բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի մեղադրանքով:

◆

Հունիսի 7-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները Երկաթուղայինների 9-րդ փողոցից բերման են ենթարկել Երեւանի բնակիչ Էդմոն Ծ.-ին, որը հետախուզվում էր գողության մեղադրանքով:

◆

Հունիսի 11-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների եւ անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ Փարիզ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից ոստիկանության Կենտրոնական բաժին է ներկայացել 54-ամյա Արմեն Բ.-ն, որը 2012 թ. դեկտեմբերից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Հունիսի 11-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները Կոմիտասի պողոտայից ոստիկանության Արաբկիրի բաժին բերման են ենթարկել 32-ամյա Ռուստամ Մ.-ին, որը ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ուկրաին. ժող. պար / Կական; Դրամա-նատուր Մար Արաս ...; Գերման. թատերա-գիր; Իմանուիլ ... / Զայլամ; Անարդար; Բեթհո-վեն, սիմ-ֆոնիա; Սարմնի մաս / Սաֆարի; ... Ֆիլիպ / Զորան Կարո; 17-րդ դարի հայ նկարիչ / «... Մուրադ»

Տափո-դակ / Կածան; Ծածկոց / Կատաղի / Ձեռք

Նպարե-ղեն / Մխիթար Գոշ; Քաղաք, կյուսյու / Զորեղ; Դրախտ, դժոխք / Քիմ. տարր

Սքեմ

Արեւա-դարձ. միրգ / Շամփուր; «... աստ-վածներ»; Հնդկ. հոգեւոր ուսուցիչ / Տոր; Չակ ...

Ֆրիտյոֆ ... / Նուշ, պնդուկ; Իտալ. բանաս-տեղծ / Հարեմ; Շրջանա-ձեւ

Աշոտ ... / Երկրի, բուհի ...; ... Խայյամ

Հրեա գրող; Թակարդ; Պատս-պարվելու տեղ; ... Նժդեհ; Սամբա; Մետաղե շրջանակ / Նոճազգի ծառ



«...ի աղջիկը»; Լավա / Նոտա

Աստղ, Կարիճ համաս-տեղ.; Վենետու-ելա; Կղզի, Ին-դոնեզիա / Ուրարտ. աստված

Լ. Տոլստոյ, հերոսուհի / Ցուցա..., վարկա...; Մարս մո-լորակ (հա-յանուն) / Նախահայր; Հրատա-րակչութ. / Սունկ; Հայրենի-քից հե-ռացած; Գյուղ, ավան

Լուսա-ծագ; Ճապոն. քաղաք; Հայկ. տառ / Ֆեոդալ; Ուրիշի հրամա-նին են-թակա

Բախտի ...; Արգելոց, Քենիա; Հավ; Հորդ

Աղբյուր / Ֆուտբ. ռմբարկու; «Տիտա-նիկ»; Ֆրան-սուա ...; Դարձ

Մակա-բույծ մի-ջատ; Ինքնաթի-ռի մակ-նիշ; Համա-չափ, մի-ակերպ; Աղթամար կղզի; Սեղանի խաղ; Ուղտաշար / ... եւ հրում

Հունա-կան դից. հսկա; Գավառ, Արարատի նահանգ; «Իմ ընկեր ...ն»

Ակոս; Գետակից փոքր; ՌԴ ինքնա-վար հանր. / Լյումիեր եղբայրներ

... Մուրա-դելի; Հացահա-տիկ / Դերանուն

Տրիոլետը հայերեն; ... Մարինո; Ֆրանս. մանրադ-րամ

Դեղա-բույս; ... եւ մատ; Կերոն / ... պտուղ

# Ուշադրություն

## Հարգելի քաղաքացինե՛ր



ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ առանձնատների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, առանձնատների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

# Աստղագուշակ




**Խոյ -** Մի պատմեք ձեր ծրագրերի մասին եւ հաջողությունը ձեզ կուղեկցի: Մի քննադատեք մտերիմներին, եթե չեք ուզում բացասական էմոցիաներ ստանալ:

**Ցուլ -** Սառը գլխով որոշումներ կայացրեք, մի հետեւեք րոպեական էմոցիաներին: Կծանոթանաք նոր մարդկանց հետ:

**Երկվորյակ -** Հաճելի տպավորություն կթողնեք առաջին իսկ պահից: Կենտրոնացրեք ձեր ներուժը եւ պատրաստվեք մեծ քայլ անելու:

**Խեցգետին -** Շատ խնդիրներ կհարթվեն: Մասնագիտական գործերն առաջ կշարժվեն գործընկերների օգնությամբ:

**Առյուծ -** Հնարավոր է օգնություն կամ մասնակցություն նոր նախագծին: Զգոն եղեք. ձեր անկեղծությունն ու միամտությունը կարող են ձեզ վնասել:

**Կույս -** Խնդիրները թույլ չեն տա հանգիստ շունչ քաշել: Որքան անշահախնդիր օգնություն ցուցաբերեք մտերիմներին, այնքան դրական փոփոխությունների կհասնեք:

**Կշեռք -** Քիչ է մնացել, որ հասնեք ցանկալի արդյունքի, այնպես որ, զբաղվեք գլխավոր գործով:

**Կարիճ -** Փորձեք հավաքել մտքերը եւ որոշել, թե ինչ եք անելու հետագայում: Հնարավոր է հետաքրքիր ուղեւորություն:

**Աղեղնավոր -** Մի մերժեք կողմնակի օգնությունը, ձեր հնարավորություններն անսահման չեն: Հիշեք, որ ձեր աշխարհը հիմնականում դուք եք կառուցում:

**Այծեղջյուր -** Ձեր հաջողությունը կախված կլինի ձեր ինքնավստահությունից եւ բարդ իրավիճակում արագ կողմնորոշվելու ունակությունից:

**Ջրհոս -** Պատրաստ եղեք գործել ըստ հանգամանքների: Հնարավոր է խաբեության զոհ դառնաք: Ազատ ժամանակը հատկացրեք ընտանիքին:

**Ձուկ -** Ձեր հաջողությունը կախված կլինի ձեր ինքնավստահությունից եւ բարդ իրավիճակում արագ կողմնորոշվելու ունակությունից:

# Փորձեք լուծել

**Խնդիր N1**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից**

**Խնդիր N2**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից**

**Նախորդ խնդիրների պատասխանները**

Խնդիր N1 1. b4-a5 b8:b4 2. a5:g7x

Խնդիր N2 1. f6-g7 h8:d4 2. c7-b8 g3:e5 3. b8:g1x

Պատրաստեց
**Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

# Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 13.06.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: